

Ժ. ՄԵՅԵՐԶՈՆ

7198

ՀԱՄ Կ(Բ)Կ ԿԿ ՅԵԼ ԿՎՀ

ՊԱՏՄԱԿԱՆ ՊԼԵՆՈՒՄԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՅԵԼ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ

ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԿՈՒՍՇՐԱՏ

1933

ՅԿՈՉ

Մ-60

23 SEP 2

1 DEC 2

ժ. ՄԵՅԵՐԶՈՆ

303R02

Մ-60

**ՀԱՄ Կ(Բ)Կ ԿԿ ՅԵՎ ԿՎՀ
ՊԱՏՄԱԿԱՆ ՊԼԵՆՈՒՄԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
Յ Ե Վ
ԱՆԴՐԿՈՎ ԿԱՍՅԱՆ
ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**


1103
37

ԶԵԿՈՒՑՈՒՄ ԹԻՖԼԻՍԻ ԿՈՒՍԱԿՏԻՎԻ ԺՈՂՈՎՈՒՄ
1933 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ

1147

**ԿՈՒՍՇՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ — 1933**

~~1147~~
~~1103~~



28 JUN 2013

7155

Ընկերներ, մեր կուսակցության կենտրոնական կոմիտեյի հունվարյան պլենումը պատմական պլենում էր: Նա գումարվեց իրենց նշանակութամբ մեծագույն յերկու հնգամյակների սահմանադրվին: Պլենումն ի մի ամփոփեց չորս տարում կատարված առաջին հնգամյակի վիթխարի տեղաշարժերի արդյունքը և ուրվագծեց առաջիկա տարիների մարտական գործողությունների մարտական ծրագիրը: Պլենումը մեր յերկրի բոլոր աշխատավորների, համաշխարհային ամբողջ պրոլետարիատի առաջ ծավալեց սոցիալիզմի շինարարության հոյակապ պատկերը: Նա կենդանի իրականության մեջ, ակնառու և ցայտուն կերպով ցույց տվեց, թե ինչպես և կառուցվում նոր կյանքը, առանց տերերի ու ստրուկների, առանց շահագործողների ու շահագործվողների, ցույց տվեց, թե ինչպես և ստեղծվում և կազմակերպվում անդասակարգ նոր հասարակությունը:

Այն ամենը, վոր միշտ յերազել է մարդկությունը, այն ամենը, վորի համար պայքար են մղել նրա լավագույն ներկայացուցիչները—այդ բոլորը հանդիսացան տվյալ պլենումի կոնկրետ որակարգի կոնկրետ կետերը: Կրկնում եմ, այդ պատճառով պլենումը համաշխարհային պատմական նշանակություն ունի և կմտնի մարդկության պատմության մեջ:

ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԳԻՐՆԵՐԸ

Պլենումում քննարկված առաջին հարցն էր հնգամյակի արդյունքները: Այդ հարցի մասին գեկուցում տվեց համաշխարհային պրոլետարիատի մեծ առաջնորդ ընկ. Ստալինը:

Ընկ. Ստալինն իր զեկուցման մեջ փայտուն կերպով վերլուծեց այն, վորին հասել ենք մենք սոցիալիզմի կառուցման ասպարեզում, այն խնդիրները, վորոնք ծառայած են մեր առաջ:

Ընկ. Ստալինը արձանագրեց, վոր առաջին հնգամյակը մենք ձրեվ, ամբողջովին, ժամկետից առաջ կատարեցինք չորս տարի

4844-91

և յերեք ամսում : Դա՛ համաշխարհային պատմական նշանակու-
թյուն ունեցող հսկայական հաղթանակ է :

Հիրավի, վո՞րն է առաջին հնգամյակի ելուժյունը, հիմքն
ու նպատակը : Առաջին հնգամյակի նպատակն էր ԽՍՀՄ-ն իբր
հետամնաց, մերթ միջնադարյան տեխնիկայով՝ վերածել արդյու-
նաբերական մի հզոր յերկրի՝ այնպիսի ինդուստրիայով, վորն
ընդունակ լիներ վերադինել, վերակառուցել վոչ միայն ամբողջ
արդյունաբերությունը, այլև տրանսպորտը, այլև գյուղատնտե-
սությունը՝ սոցիալիզմի բազայի վրա : Նա խնդիր էր դրել ցիբու-
ցան, մանր գյուղատնտեսությունը փոխադրել խոշոր, կոլեկտիվ
տնտեսության ուղիներ վրա և գրանով իսկ ապահովել սոցիալիզմի
տնտեսական բազան գյուղում, ու այդպիսով վերացնել կապիտա-
լիզմի վերականգնման հնարավորությունը ԽՍՀՄ-ում :

Սոցիալիստական ինդուստրացումը և գյուղատնտեսաբարձր
կոլեկտիվացումը, այսինքն՝ սոցիալիզմի ծավալումն շինարարա-
բարձր վիժխարի ծրագրերը, — ահա առաջին հնգամյակի հիմնական
խնդիրները : Առաջին հնգամյակն ամբողջովին և լիովին լուծեց
այդ վիժխարի խնդիրները, լուծեց մեծ դերակատարումով, լու-
ծեց ժամկետից առաջ :

Պետք է նշել այն սերտ, դիալեկտիկ կապը, վորը գոյություն
ունի առաջադրված յերկու խնդիրների միջև՝ սոցիալիստական
ինդուստրացումն և գյուղատնտեսաբարձր կոլեկտիվացումն միջև :
Դրանցից վորեւ մեկը չի կարող լուծվել առանց մյուսի : Նրանք
կազմում են մի ամբողջութուն, յերկրի սոցիալիստական վերա-
կառուցման յերկմիասնական խնդիրը :

Հիրավի հնարավոր է արդյոք արմատական վերակառուցման
յինժարկել ամբողջ արդյունաբերությունը, կարելո՞ յն արդյոք
ստեղծել վիժխարի Մագնիտկաներ, կուզնեցկներ, Դնեպրոզեններ
և այլն, մանր ու մանրագույն գյուղացիական տնտեսության հի-
ման վրա, նրա նահապետական տեխնիկայով : Այդ միևնույնն և,
թե մենք փորձենք կառուցել հոյակապ, վիժխարի շինք այնպիսի
մի «հիմքի» վրա, վորը բաղկացած է մանր ու մանրագույն վեր-
րուն խճից : Դա՛ կենդանի, կոնկրետ իրականությունից կտրված
ուտոպիստական խնդիր կլիներ :

Պրոլետարիատը և նրա կուսակցությունը պայքարելով սպոր-
տունիստների դեմ, մերժեցին հարցի այդ կորստաբեր դրվածքը և
կորուկ կերպով, ամբողջ հասակով խնդիր դրին՝ կոլեկտիվացնելը

գյուղատնտեսությունը առաջին հնգամյակի ընթացքում : Հոտ-
առաքեն այն հանգամանքը, վոր ԽՍՀՄ-ն ամենահետամնաց, ցերու-
ցան գյուղատնտեսության յերկրից վերածվեց ամենախոշոր, կազ-
մակերպված հողագործության յերկրի, գյուղատնտեսական առա-
ջափոր տեխնիկայի յերկրի, հատկապես այդ հանգամանքն ապա-
հովեց ինդուստրացման հսկայական ծավալն ու տեմպը, ապահո-
վեց չտեսնված հաղթանակներ ինդուստրացման ճակատում :

Յեվ ընդհակառակը, միթե հնարավոր էր իրականացնել
գյուղատնտեսության վիժխարի վերակառուցումը, հետամնաց
գյուղի, գարերի ընթացքում արմատացած սովորությունների մի-
լինեալոր մարդկանց կենցաղի ու տնտեսավարման ձևի վերա-
առուցումը, յեթե այդ պրոցեսի համար մենք չստեղծեյինք բազա
գյուղը ժամանակակից տեխնիկայի գործիքներով՝ արագորեն և
վիժխարի չափով հազեցնելու համար, յեթե մենք չորս տարում
կառուցված հնգամյակում գյուղ նետած չլինեյինք ավելի շատ
գյուղատնտեսական մեքենա, քան կար այնտեղ առաջին հնգա-
մյակի սկզբին : Միմիայն չարս տարում կատարված հնգամյակի
քննադատում գյուղատնտեսաբարձր արվեցին 1.600 միլիոն ուրբու
արժեք ունեցող մեքենաներ ու գործիքներ, միևնույն մեր գյուղա-
տնտեսաբարձր մեք հնգամյակի սկզբին գոյություն ունեցող բո-
լոր մեքենաների ու գործիքների ամբողջ արժեքը կազմում էր
1150 միլիոն ուրբի :

Մենք արհամարհանքով մերժեցինք պարոն Տրոցկու տգետ տե-
սությունը, վորը պնդում էր, թե «ինչպես տասը ձկնորսական
նավակներից մի շողենավ չի շինվի, այնպես էլ պրիմիտիվ տեխնի-
կա ունեցող գյուղացիական տնտեսությունների գումարումից
առաջադար գյուղատնտեսություն չի ստեղծվի» : Յեվ այդ պատ-
ճառով իրեն թե պետք է մի քիչ կամաց շարժվենք կոլեկ-
տիվացման ասպարեկում... Մենք արհամարհանքով մերժեցինք
այդ ուղորտունիստական տեսությունը : Յեվ կյանքի փորձը ցույց
տվեց, վոր նույնիսկ գուտ մանուֆակտուրային տիպի կոլանտե-
սությունները, նույնիսկ պարզապես գյուղացիական ինվենտարի
գումարումով կազմված կոլանտեսությունները, նույնիսկ այդպիսի
կոլանտեսությունները ավին աշխատանքի արտադրողականության
դրաժի բարձրացում, համեմատած անհատական տնտեսություննե-
րի հետ : Բայց մենք հո միմիայն գյուղացիական ինվենտարը չենք
դումարում, չէ՞ վոր մենք կառուցել ենք 2-3 տարվա ընթացքում,

մի շարք առաջնակարգ տրակտորային դործարաններ, գյուղ ենք նետել տասնյակ հազարավոր տրակտորներ ու կոմբայններ, գյուղատնտեսական բարդ մեքենաներ, կառուցել ենք ՄՏԿ-ների հսկայական ցանց և այլն: Դրանով իսկ մենք ամենամուրբ բազաստեղծեցինք գյուղատնտեսություն սոցիալիստական վերակառուցման մեծ պրոցեսի համար:

Անհրաժեշտ և մատնանշել մի կարևորագույն հանդամանք ևս, վորպես առաջին հնդամյակի բնորոշ գիծը: Դա սոցիալիստական շինարարության արագ, ուժեղ տեմպն է: 22 տոկոս—այդ է յեղել արդյունաբերություն արտադրանքի տարեկան միջին աճումն առաջին հնդամյակում, մի տեմպ, վորը 3-4 անգամ գերազանցում է ինդուստրիայի աճման ամենաարագ տեմպն Սմերիկայում՝ նրա ծաղկման լավագույն տարիներին: Գյուղատնտեսություն ասպարեզում կուսակցությունը հասավ այն բանին, վոր այժմ կորտնտեսությունները միացնում են գյուղացիական տնտեսություններին ավելի քան 60 տոկոսը և ընդգրկում են գյուղացիական ցանքերի ամբողջ տարածություն ավելի քան 70 տոկոսը: Ինչ-վոր յերեք տարվա ընթացքում ԽՍՀՄ-ն մանր գյուղացիական տնտեսություն յերկրից վերածվեց աշխարհիս ամենախոշոր գյուղատնտեսություն յերկրի:

Ճիշտ է յեղել արդյոք սոցիալիստական շինարարություն ամենաարագ տեմպերի այդ քաղաքականությունը: Աջ ուղորտունիստները կարուկ կերպով հանդես ելին դալիս այդ քաղաքականություն զեմ, նրանց հետևից ել Տրոցկին բարբառում է, թե մեր կուսակցության քաղաքականությունը «արկածախնդիր» քաղաքականություն է: Համ Կ (բ) Կ կենտկոմը լավագույն, անհողողդդ յենինեցի գլխավորություն, հզոր հեղափոխություն հզոր առաջնորդ ընկ. Ստալինի գլխավորություն, արհամարհանքով մերժեց ուղորտունիստների դավաճան առաջարկները: Հիրտի, «միթե կարելի յեր չիթանել, առաջ չբշել յերկիրը, վորն իր դարգացմամբ հետ է մնացել հարյուր տարով, վորին, նրա հետամնացություն պատճառով, մահացու վտանգ է սպառնում: Միմիայն այդպիսով կարելի յեր հնարավորություն տալ յերկրին շտապ կարգով վերադինվելու նոր տեխնիկայի բազայի վրա և դուրս դալու վերջադեռ ըայն ճանապարհը (Ստալին): Միթե հնարավոր եր կադիտալիստական շրջապատի և կապիտալիստական յերկրների սպառալիներություններ կատաղի աճման պայմաններում չիթանել, առաջ չբշել յերկիրը

նրան ուղղմական տեսակետից ամենահզոր յերկրներից մեկը դարձնելու նպատակով: Միթե հնարավոր եր չիթանել ու առաջ չբշել յերկիրը ներքին թշնամու հանդես, մոլեգնած կուլակի հանդես, վորպեսզի մեծաթափ ինդուստրացման ու կուլիտիվացման բազայի վրա դրվեր կուլակություն ջախջախման հարցը, նրա վորպես դասակարգի վերացման հարցը:

Վոչ, կուսակցությունն այդ հարցերից և վոչ մեկում՝ չեք կարող կանգնել կես ճանապարհին: Նա յերկաթակուռ համառություն չորս տարում կատարված ամբողջ առաջին հնդամյակի ընթացքում կիրառում եր ամենաարագ տեմպի քաղաքականությունը: Յեկ այդպիսով ձեռք բերեց հսկայական պատմական հաղթանակներ:

ՄԵՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐԸ

Վերցնենք հիմնական ավյախներ: ԽՍՀՄ-ն հեգամյակի ընթացում ագրարային յերկրից վերածվեց ինդուստրիալ յերկրի: Արդյունաբերություն տեսակարար կշիռը (յերբ անչեզորեն աճում եր գյուղատնտեսությունը) 1927—1928 թ. 48 տոկոսի գիմաց 1932 թվին հասավ 70 տոկոսի: ԽՍՀՄ-ն հետ մնացած յերկրներից առաջ անցավ տեխնիկական տեսակետից աշխարհիս ամենազարգացած յերկրների առաջին շարքերը, առաջին տեղը գրավելով գյուղատնտեսական մեքենաչինություն՝ արակտորներ ու կոմբայնների արտադրություն ասպարեզում, յերկրորդ տեղը գրավելով թուջի, նավթի, ընդհանուր մեքենաչինություն ու տրանսպորտի ասպարեզում, յերրորդ տեղը՝ ելեկտրոներդիկայի արտադրություն բնազավառում և այլն: Վերջին յերեք տարում կազմակերպվեց ավելի քան 200.000 կուլտիվ տնտեսություն, 5000 խորհանուսուրյուն, ընդ վորում կուլտնտեսությունները խորհանուսությունների հետ միասին ընդգրկում են բոլոր ցանքերի տարածություն ավելի քան 80 տոկոսը: Հեգամյակի տարիներին ավելի քան կրկնապատկվեց գյուղատնտեսության զինվածությունը մեքենաներով, առանձնապես աճեց գյուղատնտեսության զինվածությունը ժամանակակից բարդ տրակտորաքարչ մեքենաներով:

Վորպես արդյունք մեքն ունեքն վորոշ չափով մի նոր յերկիրը տնտեսական կառուցվածքով, իր տնտեսական ձևերով, իր տեխնիկական կարողությունը:

Սուրբ տեղաշարժեր տեղի ունեցան նաև յերկրի սոցիալական կառուցվածքում: Սոցիալիստական ինդուստրացման և դյուրացման հոլեիտիվացման հակայական թափն ու ծավալը քանդակելն արմատապես այն, վորը կազմում էր ժողովրդական մասնաների ճնշվածության ու ընկճվածության հիմքը: Վերացված է գործադրությունը և դրա հետ միասին վերացված է բանվոր մարդու անխտանալիությունը վաղվա նկատմամբ: Կոլտնտեսական շինարարությունն ընդգրկել է համարյա բոլոր չքավորներին և այդ պատճառով վերացվել է դյուրի դարավոր պատկերից, քայքայումը և շերտավորումը: Դիվային այն սխեման, վորն աշխատավոր մարդուց ծծում էր ամբողջ «արյունը նրա սրտից, ուղեղը՝ նրա գլխից» (Մարքս)—այդ ամբողջ սխեմանը ջարդ ու փշուր է յեղել, նրանից քարը քարի վրա չի մնացել: Չենք գտնի ավելի ուժեղ պատկեր, քան յեթե համեմատենք մեր քաղաքն այն քաղաքի հետ, վոր յեղել է առաջ, և ինչպիսին է այժմ կապիտալիստական վերին քաղաք: Յես ապրել եմ Մասկվայի ծայրամասերում մինչհեղափոխական շրջանում: Բառացի ամեն մի տնից ամեն մի անկյունից հնչում էր վշտի ու հուսահատության, անսահման տառապանքների ու դրկանքի աղաղակը: Կապիտալիստական քաղաքի բոլոր սարսափներն ու արանները խառցած էին այնտեղ և աչքի էլին խիտում: Անցեք այժմ Մասկվայի ծայրամասերը: Դուք կտեսնեք բազմաթիվ նոր հիանալի տներ, առողջ, առույգ բանվոր ժողովուրդ՝ լի խանդավառությամբ և շինարարության պաթոսով, կտեսնեք կոլտնտեսայի պալատների ու աշխատանքի լայն ցանց և այլն, կտեսնեք նոր քաղաք, վորի տերն է նոր մարդը:

Նույնը նաև դյուրի մասին: Ո՞ր է ընչազուրկների, չքավորների, սակավազոր միջակների այն բանակը, վորը հեծում էր դյուրում, վորը նորանոր լրացումներ էր տալիս «լյուծպեն պրոյետարիատի» շարքերին: Միլիոնավորները դիմում էլին արտադրացության մի պատառ հացի համար: Չկա այդ բանակը. նա անհետացել է յերկրի սոցիալական յերեսից: Չքավորը, միջակը այժմ հանդիսանում է ապահովված տեր և անդամ կոլտնտեսության, վորն ունի արակտորներ, սերմֆոնդեր, գյուղատնտեսական մեքենաներ և այլն:

Պրոլետարիատը իր կուսակցության գլխավորությամբ չորս տարում կատարված առաջին հնգամյակում ստեղծեց քե՛ տնտեսա-

կան և քե՛ սոցիալական կառուցվածքով վորոշ աստիճան նոր յերկիր: Փոխվել է յերկրի դեմքը—այս է առաջին հնգամյակի հիմնական արդյունքը, վորը մեծ նշանակություն ունի ամբողջ համաշխարհային հեղափոխական շարժման համար:

Ընկերներ, յեթե վերցնենք մեր յերկիրը՝ Անդրկովկասը, ապա այստեղ ինդուստրացման և դյուրացման հոլեիտիվացման վերակառուցման պրոցեսը կատարվել է ավելի բուռն թափով: Յե՛լ այդ հասկանալի յե: Չե՞ վոր Անդրկովկասը, ցարական իմպերիալիզմի այդ ճնշված գաղութն անցյալում, վորտեղ ցարիցի խոչընդոտ էր հարուցում արտադրողական ուժերի զարգացման դեմ, «ել ավելի դյուրացիական մի յերկիր էր, քան Ռուսաստանը» (Լենին): Նախկին ցարական այդ գաղութի պատմականորեն ստեղծված սոցիալ-տնտեսական ու կոլտնտեսական անհավասարությունը վերացնելու համար անհրաժեշտ էր «ամբողջ ուժով զարգացնել հարուստ յերկրի արտադրողական ուժերը, սոլիտակ ածուխը, վոտոգումը (Լենին):

Յե՛վ ահա առաջին հնգամյակում արդյունաբերության արտադրանքն Անդրկովկասում աճել է 170 տոկոսով՝ Միության 119 տոկոս աճման հանդեպ: Արդյունաբերության տեսակարար կշիռն Անդրկովկասում հասնում է 76 տոկոսի, հանդեպ Միության 68,5 տոկոսի: Անդրկովկասի հիմնական արդյունաբերությունը՝ նավթարդյունաբերությունն իր հնգամյակը կատարեց յերկու և կես տարում:

Անդրկովկասի դյուրացման մեջ տեխնիկական ղինվածությունը բարձրացել է յոթ անգամ ցանքի մի հեկտարին (3 ու 90 կոպեկից 27 սուբլու), հանդեպ Միության 2,5 անգամ աճման: Անդրկովկասի կոլտնտեսություններն ընդգրկել են հիմնական բամբակացան շրջաններում տնտեսությունների 70-80 տոկոսը:

Դրա շնորհիվ ԱՄՖՍՀ-ի ժողովրդական տնտեսության ամբողջ արտադրանքը 1932 թվականին կրկնապատիկ ավելի յե հնգամյակի առաջին տարվա արտադրանքից, իսկ ԱՄՖՍՀ-ի ժողովրդական յեկամտի տեսակարար կշիռը Միության ընդհանուր տնտեսության մեջ 3,6 տոկոսից հասել է 4,5 տոկոսի:

Այս բոլոր ավյայներն անվիճելիորեն ցույց են տալիս, վոր Անդրկովկասն առաջին հնգամյակի իրականացման գործում բնագցել է առաջին շարժերում:

ՅՈՒՐԱՑՆԵԼ ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՆՈՐ ՏԵԽՆԻԿԱՆ

Ընկերներ, առաջին հնգամյակի մեծագույն նվաճումները մեզ համակում են պրոլետարիատի ուժի ու կարողության դիտակցութեամբ: Մենք տեսնում ենք, անձամբ շոշափում ենք, վոր «չկա այնպիսի ամբողջ, վորը չկարողանան դրավել բայլչեիկները» (Ստալին): Սակայն մեր կուսակցության համար, Լենինի ու Ստալինի կուսակցության համար անվայել, խոչորագույն սխալ կլինեն, յեթե մեր գլուխները սրտույտ գալին այդպիսի բարձունքներում, յեթե մենք «հաջողութուններից դժբապտույտ» ստանայինք: Մեր կուսակցությունը միշտ աչքի յե բնկել իր մեծագույն զգաստութեամբ, նրանով, վոր միշտ, ամենուրեք կարողացել է ղեկավարվել կենդանի իրականութեան մարքսիստական լենինյան վերլուծումով: Մեր մեծ կուսակցութեան այդ մեծ գծերն ամենատեղիին կերպով յերևան յեկան վերջին պլենումում:

Մեր ձեռք բերած բոլոր պատմական հաջողութուններից հետո պլենումը դրեց տեմպի վոչ թե հետագա արագացման, այլ նոր ձեռնարկութունների, նոր տեխնիկայի յուրացման հարցը: Մենք այսուհետև ևս արագորեն առաջ ենք շարժվելու, սակայն յերկրորդ հնգամյակի առաջին տարիներին արդյունաբերութեան արտադրանքի տարեկան միջին աճման համար վերցնում ենք վոչ թե 22 տոկոս, ինչպես առաջին հնգամյակի տարիներին, այլ միջին հաշվով 13-14 տոկոս:

«Յեա կարծում եմ, վոր յերկրորդ հնգամյակի համար մենք պետք է վերցնենք արդյունաբերական արտադրանքի աճման նվազ արագ տեմպ: Առաջին հնգամյակի շրջանում արդյունաբերութեան արտադրանքի տարեկան աճումը կազմում էր միջին հաշվով 22 տոկոս: Յեա կարծում եմ, վոր յերկրորդ հնգամյակում արդյունաբերութեան արտադրանքի համար պետք կլինի ընդունել արդյունաբերութեան արտադրանքի տարեկան միջին աճման 13-14 տոկոս» (Ստալին):

Մենք հնարավորութուն ունենք այդպիսի տեմպ ընդունելու, վորովհետև շնորհիվ առաջին հնգամյակի հաջող իրականացման մենք արդեն հիմնականում կենսագործել ենք նրա գլխավոր խրնդիբը՝ ժամանակակից նոր տեխնիկայի բազա յենք ստեղծել ար-

դյունաբերութեան, տրանսպորտի ու դյուղատնտեսութեան համար: Յեվ այժմ մեզ համար անհրաժեշտ չե ել ավելի խթանել և առաջ քշել յերկիրը:

Նույնը նաև կոլտնտեսութունների վերաբերմամբ:
«Մենք հիմնականում արդեն ավարտել ենք ԽՍՀՄ-ի դիտավոր շրջանների կոլեկտիվացումը: Հետևապես այդ սպարեպում ավելի շատ բան ենք արել, քան կարելի յեր սպասել: Յեվ վոչ միայն ավարտել ենք հիմնականում կոլեկտիվացումը: Մենք կարողացել ենք ստեղծել այնպիսի պայմաններ, վոր դյուղացիութեան հսկայական մեծամասնութեան դիտակցութեան մեջ կոլտնտեսութունները դարձել են տնտեսութեան ամենից ավելի ընդունելի ձևը: Այդ հսկայական նվաճում է, ընկերներ: Այժմ հարցն այն չէ, թե պե՞տք է լինեն կոլտնտեսութունները, թե վոչ: Այդ հարցն արդեն դրական լուծում է ստացել: Կոլտնտեսութուններն ամրացել են վորպես նվաճում և հին, անհատական տնտեսութեան ուղին փակված է վերջնականապես: Այժմ մեր խնդիրն է ամրացնել կոլտնտեսութունները կազմակերպորեն...» (Ստալին):

Յեվ ահա պլենումը կոնկրետ իրականութեան այդպիսի դրաստ, պարզորոշ հաշվառման հիման վրա, ի յրացումն նոր շիճարարութեան ներկա լոգունդի, առաջադրում է «նոր ձեռնարկութունների, նոր շինարարութեան յուրացման» լոգունդը:

«Ի տարրերութուն առաջին հնգամյակի, յերկրորդ հնգամյակը հանդիսանալու յե առավելապես արդյունաբերութեան նոր ձեռնարկութունների յուրացման հնգամյակ, դյուղատնտեսութեան նոր ձեռնարկութունների՝ կոլտնտեսութունների, խորհտնտեսութունների կազմակերպական ուղիցման հնգամյակ, վորն, իհարկե, չի բացառում, այլ յենթադրում է նոր շինարարութեան հետագա զարգացում: Այդ նշանակում է, վոր յերկրորդ հնգամյակը, յեթե նա նկատի ունի ձեռք բերել լուրջ հաջողութուններ, պետք է նոր շինարարութեան ներկա լոգունդը լրացնել նոր ձեռնարկութունների, նոր տեխնիկայի յուրացման նոր լոգունդով»:

Այդպես դրեց հարցը կենտկոմի պլենումը:
Մեզ մոտ, Անդրկովկասում, առանձնապես սուր կերպով է դրված նոր ձեռնարկութունների, նոր տեխնիկայի յուրացման հարցը: Ընդհանուր առմամբ մենք ավելի արագ ենք առաջ շարժ-

վում ինդուստրացման ճանապարհով, քան ամբողջ Միությունը: Մյուս կողմից՝ մենք պատմականորեն հետ ենք մնացել տնտեսական, կուլտուրական բնագավառներում: Ահա այդ հակասությունը, կենսական դիալեկտիկ այդ հակասությունը հարկադրում է մեզ առանձնապես ուժգին կերպով դնել Անդրկովկասում յուրացման հարցը: Այդ են վկայում բոլոր տվյալները:

Վերցրեք արդյունաբերությունը: Մի շարք ճյուղերում մենք կատարել ու գերակատարել ենք վորակական ցուցանիշները (Սերգո Ուլանիկիձեյի անվան նավթահանքի յերկրորդ ցեխը, Պլատակովի անվան գործարանը, Ստալինի անվան շոգեքարշերի նորոգման գործարանը), սակայն ամբողջովին վերցրած Անդրկովկասի արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականության անձուժը զգալի չափով հետ է մնում պլանային առաջադրանքներից: 1931 թվականին ԺՏԴԽ արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրականությունն աճեց ընդամենը 6 տոկոսով, փոխանակ պլանում նախատեսված 29 %-ի, ինքնարժեքի իջեցումը կազմում է ընդամենը 0,4 տոկոս, փոխանակ պլանում նախատեսված 7 տոկոսի: 1932 թվականին մենք ունենք ավելի անբավարար պատկեր՝ ծանր արդյունաբերության ինֆլյացիան անկ է 13 տոկոսով, թեթև արդյունաբերությանը՝ 11 տոկոսով: Դրան պետք է ավելացնել այն, ինչ որ նավթարդյունաբերության ասպարեզում մենք ակնհայտորեն անբավարար ենք աշխատել: 1932 թվականին մենք տվինք մի միլիոն տոնն պակաս նավթ, քան 1931 թվականին: Մենք պլանի ուրվագծածից ուշացել ենք նաև մի շարք կարևորագույն շինարարութայնների գործարկման նկատմամբ (Ռիոնդես, Չորագես, Յերգես, Գյանջա): Այդ բոլորը մեզ հարկադրում է 1933 թվականին ամբողջ ուժով առաջադրել նոր ձեռնարկութայնների և նոր տեխնիկայի յուրացման լոգուևգը:

Մենք արդեն արձանագրեցինք, ինչ որ Անդրկովկասում միջին հաշվով մենք ավելի արագ ենք առաջ շարժվում ինդուստրացման ուղիով, քան Միությունն ամբողջութայնով վերցրած: Նոր շինարարութայն լոգուևգն այստեղ գործում է առանձին ուժով: Մենք անհնում ենք այժմ, ինչ որ նոր ձեռնարկութայնների և նոր տեխնիկայի յուրացման լոգուևգը ևս այստեղ պետք է առաջադրվի առանձին ուժով:

Նույնը վերաբերում է նաև գյուղատնտեսության: Մենք հըս-

կայական հաջողութայններ ձեռք բերինք սպառողական մշակութայններին (բամբակ, թեյ, ծխախոտ և այլն) անցնելու դժով: Մենք առաջին հնգամյակի տարիներին Անդրկովկասի գյուղատնտեսութայն տեխնիկական մշակութայնների ցանքերի տարածութայնն ընդարձակեցինք 200.000 հեկտարով, սակայն շատ հետ ենք մնում բերքատվութայն բարձրացման ասպարեզում: Բամբակադործութայն ասպարեզում, որինակ, մենք չենք հասել նույնիսկ միջին բերքատվութայն: Ուստի մենք հարկադրված ենք ավելի արագ շարժվելու: Մեզ բամբակի բերքատվութայն բարձրացման համար տալիս են այնպիսի առաջադրանքներ, ինչ որ մեկ և կես անգամ գերազանցում են Միութայն միջին առաջադրանքները, այն է՝ բարբոտյունը բերքատվութայնը 1933 թվականին 15—20 տոկոսով՝ հանդեպ միջին 8 տոկոսի:

Յեղրակացութայնը պարզ է, ընկերներ՝: Հասկապես այն հանգամանքը, ինչ որ մենք առաջին հնգամյակում առանձնապես արագորեն ենք առաջ դնացել, հարկադրում է մեզ առանձնապես սուր կերպով դնել Անդրկովկասում նաև կենտրոնի պլանումի դրած խնդիրը՝ նոր շինարարութայն լոգուևգը յուրացման լոգուևգով լրացնելու խնդիրը:

Այս է մեր առաջին հետևութայնը կենտրոնի պլանումի վորջումներից:

ՋԱՐԳՈՒՓՇՈՒՄ ԱՆԵԼ ՄԵՌՆՈՂ ԳԱՍԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐՋԻՆ ՄՆԱՅՈՐԴՆԵՐԸ ՅԵՎ ԶԱԽՋԱԽԵԼ ՆՐԱՆՑ ԳՈՂՈՒՆԻ ԴԱՎԵՐԸ

Ընկերներ, 1-ին հնգամյակի մեծագույն հաղթանակները մենք ձեռք ենք բերել, նվաճել ենք կատարի պայքար մղելով Միութայն ներսում շահագործող դասակարգերի մնացորդները դեմ: Պատմութայն ասպարեզից վոչ մի դասակարգ չի հեռանում: առանց կատարի, հուսահատ, մահառիթ պայքար մղելու իր գոյութայն համար: Այդ է սովորեցնում մեզ համաշխարհային պատմութայն ամբողջ փորձը: Այդ է պատճառը, ինչ որ մեր կուսակցութայնն այնքան զգաստ, այնքան աշալուրջ և ուշադիր կերպով հետամուտ է լինում դասակարգային թշնամուն, այնքան անողորմ ու վճարար ջախջախում, վերացնում է նրան: Այդ է սովորեցրել մեզ ընկ. Լենինը, այդ է սովորեցնում մեզ ընկ. Ստա-

լինք, այդ և մեր անպարակութեան դրավականը: Վարքան անհեթեթ են, վորքան դավաճանորեն են հնչում այժմ հնգամյակի անցյալ տարիների լույսի մեջ ոպորտունիստների լիբերալ անսուբյուռները «սոցիալիզմի մեջ կուլակի խաղաղ ներածելու մասին», «դասակարգային պայքարի մարեղու» մասին և այլն: Դրանք մեր կուսակցութունը զինաթափ անելու տեսություններ էյին, դրանք կուլակի՝ մեր միջավայրում, մեր սեփական շարքերում գտնվող գործակալների տեսություններն էյին:

Վերհիշենք, ընկերներ, անցյալ հնգամյակում տեղի ունեցած դասակարգային պայքարի հիմնական ետպները: Յես վերցնում եմ անանձնապես մի ճակատամասը, վորտեղ պայքարը հատկապես սուր եր—դասակարգային պայքարի յուրատեսակ գլխավոր ճակատամասը: Վերցնում եմ հացի և ալկառը: Այստեղ և կենտրոնացրել կուլակն իր գլխավոր ջանքերը, վորովհետև հացը սոցիալիստական շինարարութեան հիմնական նախադրյալն և, վորովհետև սոցիալիստական շինարարութեան ծավալումն ավելի ու ավելի մեծ քանակութեամբ հաց և պահանջում, վորովհետև այդ հացի լուծումը հնարավոր ե միմիայն սոցիալիզմի գործի հաղթական առաջընթացով վոչ միայն քաղաքում, այլև գյուղում, վորտեղ ամենամեծ հետամնացութուն կա, վորտեղ դասակարգային թշնամին ամենաչափ հենակետեր ունի, վորտեղ սոցիալիստական սրբութեան ամենամեծ դժվարությունների յե հանդիպում: «Հացի համար մղվող պայքարը սոցիալիզմի համար մղվող պայքար ե» (Լենին): Այս տարիների ընթացքում այդտեղ մղվում եր ամենալարված, ամենահամառ, ամենակատաղի պայքար:

Հացի ճակատամասում կուլակի դեմ վճռական մարտեր էյին մղվում արդեն հնգամյակի սկզբին: Յեթե վերականգնման շրջանում մենք հավաքում էյինք 300—400 միլիոն փութ հացահատիկ, ապա վիթխարի շինարարութեան ծավալումն առաջին հնգամյակում պահանջեց տարեկան 700—800 միլիոն փութ հաց: Դա առաջ բերեց կուլակային կատաղի դրոհներ: Կուսակցութեան մեջ գտնվող նրանց գործակալներն ուղղակի դրին ինդուստրացման փեմպը կծկելու, հացամթերումների պլանը նվազեցնելու հարցը: Կուսակցութունն արհամարհանքով մերժեց աջերի կուլակային դիրքավորումները, աներկյուղ ծավալեց իր արշավը կուլակի դեմ: Կուլակը ջախջախեց, հացի մթերման պլանները հատար-

վեցին: Դրանով ապահովվեց «մեծ բեկումը» (Ստալին), միջակի վճռական շրջադարձը դեպի կոլեկտիվացումը, դեպի սոցիալիզմը: Սկսվում ե համատարած կոլեկտիվացման շրջանը և նրա հիման վրա կուլակութեան վորպես դասակարգի վերացումը: Արմատախիլ ե արվում կապիտալիստական շահագործող վերջին դասակարգը: Լենինյան «ովում» հարցն անվերադարձորեն լուծվում ե հողուտ մեղ, հողուտ սոցիալիզմի:

Առաջին հնգամյակի վերջերին մենք խնդիր դրինք՝ հավաքել 1300—1400 միլիոն փութ հաց: Գյուղատնտեսութեան վերակառուցումն ապահովում ե այդ պլանի կատարումը: Դարձյալ ծավալվում ե կատաղի պայքար կուլակութեան մնացորդների դեմ, կուլակութեան թափթիռակների դեմ, վորոնք իրենց վերջնական կործանումից առաջ, վորպես մահացու վերք ստացած շունչը տվող մի դադան, դիմում են ամենահուսահատ միջոցների: Կուլանի սեահող տախտաններում, Ուկրայինայի և Ստորին Վոլգայի հացառատ շրջաններում, կուլակային եպիզոտները պայքար են կազմակերպում հացամթերումների դեմ, կոլտնտեսական կարգերի դեմ: Անցյալ շրջանի հետ համեմատած փոխվում ե դասակարգային թշնամու դեմքը և նրա տակտիկան:

«Թշնամին հասկացավ փոխված պայմանները, հասկացավ դյուղի նոր կարգերի ուժն ու կարողությունը, նա վերակազմեց իր շարքերը, փոխեց իր տակտիկան՝ կոլտնտեսությունների դեմ ուղղակի գրոհից անցավ դադտագողի աշխատանքի» (Ստալին):

«Գյուղի ներկայի կուլակներն ու յենթակուլակները, դյուղի ներկա հակախորհրդային տարրերը մեծ մասամբ շատ «մեղրածոր», համարյա «սուրբ» մարդիկ են: Կարիք չկա նրանց կոլտնտեսություններից հեռու փնտռելու, նրանք նրատաճ են հենց կոլտնտեսութեան մեջ, վարում են պահեստապետների, ծախսարարների, հաշվետարների, քարտուղարների և այլ պաշտոններ: Նրանք յերբեք չեն ասի «կորչի կոլտնտեսությունը»: Նրանք կոլտնտեսութեան «կողմնակից են»: Սակայն կոլտնտեսություններում նրանք կատարում են այնպիսի սարտաժային և միասարարական աշխատանք, վոր կոլտնտեսությունների բանը շատ կվատանար: Նրանք յերբեք չեն ասի «կորչեն հացամթերումները», նրանք հացամթերումների «կողմնակից» են: Նրանք «միայն» դիմում

են դեմագոգիայի, պահանջում են, վոր կորսնտեսությունը կազմի յերեք անգամ ավելի մեծ անասնաբուժության Փոնդ, քան պահանջում է գործը, պահանջում են, վոր կորսնտեսությունը հանրային սննդի համար տա 6—10 Փունտ հաց որական յուրաքանչյուր աշխատողին և այլն: Հասկանալի չէ, վոր այդպիսի «Փոնդերից» հետո և հանրային սննդի համար այդքան մթերքներ տալուց հետո, այդպիսի խարդախ դեմագոգիայից հետո կորսնտեսության տնտեսական կարողությունը պետք է թուլանա և հացամթերման համար տեղ չի մնա» (Ստալին):

Կուսակցությունը պատասխանեց 1932 թ. աշնանը Չախշախիչ հարված հասցնելով կուլակային սարսափի փորձերին: Յեղ կուսակցությունը պլենումում, ընկ. Ստալինի ծրագրային պատմական յերևութում, վորը նվիրված էր գյուղի աշխատանքի հարցերին, ամբողջ հասակով հարց դրեց, վոր անհրաժեշտ է անհապաղ վերակառուցել կուլակության դեմ մղվող պայքարի ճակատը, վոր անհրաժեշտ է մերկացնել և վերջնականապես ջախջախել կուլակության և կապիտալիստական մյուս դասակարգերի մնացորդները:

Ի՞նչ պայմաններ են անհրաժեշտ դրա համար: Նախ և առաջ՝ Լեղափոխական զգաստություն:

«Հեղափոխական զգաստությունը հենց այն հատկությունն է, վորն առանձնապես անհրաժեշտ է այժմ բայլչեիկներին» (Ստալին):

Պետք է կարողանալ տեսնել կուլակին նրա նոր, խորամանկ, ճարպիկ, ճիզվիտական դիմակի տակ, պետք է կարողանալ վայր առնել կուլակի յերեսից նրա դիմակը, չենթարկվել նրա դեմագոգիային: Պետք է գիտենալ ցույց տալ կորսնտեսականներին կուլակի իսկական հակահեղափոխական դեմքը:


Ապա մեզ անհրաժեշտ է «պրոլետարիատի հզոր, ուժեղ դիլտատուրա»: Կուլակության և կապիտալիստական մյուս դասակարգերի մնացորդները դուրս զցված լինելով իրենց հունից, յիր ու ցան լինելով ամբողջ ԽՍՀՄ-ում, բուն են դրել մեր գործարաններում, մեր հիմնարկներում, առևտրական կազմակերպություններում, յերկաթուղային ու ջրային տրանսպորտի ձեռնարկություններում և գլխավորապես կորսնտեսություններում ու խորհատնտեսություններում: Այդ բոլոր թափթփուկները հագել են «բուն-

վորական», «գյուղացիական» դիմակներ, տեղ-տեղ թափանցել են նույնիսկ կուսակցության մեջ: Այդ թափթփուկների գործելակերպն է՝ ամեն կերպ փչացնել, արգելակել մեր շինարարությունը, առաջին հերթին արշավ կազմակերպել խորհրդային տնտեսության հիմունքների դեմ՝ հանրալին սրբազան սեփականության դեմ: Այստեղ է թաղված վերջին ժամանակներս նկատվող՝ պետական-կոոպերատիվ, կոլանտեսական դուլքի մասսայական հափշտակման և գողացման յերևութների արմատը: Այստեղ է մթերումների կուլակային սարսափի արմատը: Այդ պայմաններում միանգամայն պարզ է մեր խնդիրը:

Պրոլետարիատի ուժեղ, հզոր Եկտատուրա՝ ահա թե ինչ է պետք մեզ այժմ, վորպեսզի ջարդ ու փշուր անենք մեռնող դասակարգերի վերջին մնացորդները, ջախջախենք նրանց գոյունի դավերը» (Ստալին):

Վերջապես յերբորդ՝ պետք է պայքար կազմակերպել բայլչեիկյան կորսնտեսությունների համար: Պետք է հասկանալ, թե ինչ հողի վրա յեն կառուցում այժմ կուլակային թափթփուկներն իրենց ճիզվիտական գործելակերպը: Կուլակը փորձում է հենթերենց ճիզվիտական գործելակերպը: Կուլակը փորձում է հենթերենց ճիզվիտական գործելակերպը մի մասի գիտակցության մեջ գոյություն ունեցող սեփականատիրական հոգեբանության մնացորդների կենսունակության վրա: Դուք գիտեք մարքսիստական այն ճշմարտությունը, վորն ասում է. «կեցությունը վորոշում է գիտակցությունը»: Գիտակցության ու կենցաղի այդ համապատասխանությունը չի կարելի կյանքում ձեռք բերել գոհակացված կերպով, սխեմատիկաբար, մեխանիստաբար: Վոչ, այստեղ տեղի չեն ունենում գիտակցության մի պրոցես, վորի ընթացքում «մարդ չէ ունենում գիտակցությունն իր զարգացմամբ հետ է մնում նրանց կանց գիտակցությունն իր զարգացմամբ հետ է մնում նրանց փոստական դրությունից» (Ստալին): Կորսնտեսականների մի մասի մոտ գիտակցության վերակառուցման այդ հետամնացությունը հանդես է գալիս այժմ առանձնապես ուժգին կերպով: Կորսնտեսականներն իրենց դրությամբ արդեն մենատնտեսներ չեն, այլ կոլեկտիվիստներ են, սակայն նրանց մի մասի գիտակցությունն այնուամենայնիվ հին է, մասնավոր-սեփականատիրական: Յեղ ահա կուլակային ու այլ թափթփուկները փորձում են կառչել այդ ողակին և նրա հիման վրա կատարի պայքար ծավալել հացամթերումների դեմ, բայլչեիկյան կորսնտեսությունների դեմ, սոցիալիստական շինարարության դեմ:

1103 37
4844-91



Այդ չեն հասկանում մեր կամուրջներից վրձանք, վորոնք դանում են, թե «բանի վոր կոլտնտեսությունները տրված են, դրանով իսկ տրված է ամեն ինչ» գյուղի սոցիալիստական շինարարութեան համար: Դրանով իսկ նրանք զլորվում են կոլտնտեսությունների մանր բուրժուական իդեալացման տերերի վրա:

Ընկեր Ստալինը փայլուն, հանճարեղ կերպով վերլուծեց, թե ինչպես պետք է մտտենան բայլչեիկները կոլտնտեսություններին:

